

ՊՈՂՈՍ ՄԱԿԻՆՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

Սովետա՛յ գրականագիտ-քննադատ. թարգմանիչ, պետական և կուսակցական գործիչ Պոլոս Մակինյանը (1884—1938) 1922—1924 թվականներին աշխատել է Անդրֆեդերացիայի արտաքին առևտրի ժողովրդական կոմիսարիատի Կ. Պոլսի ենթակայացուցությունում: Այդ տարիներին նա նամակագրություն և ծանոթություն է հաստատել արտասահմանում ապրող մի շարք հայ մտավորականների, այդ թվում՝ արևմտահայ անգլանի գրող, գրականագետ-քննադատ, թարգմանիչ, հրապարակախոս և խմբագիր Արշակ Չոպանյանի հետ (1872—1954): Մտերև հրապարակվում է նրան ուղղած Պ. Մակինյանի երեք նամակը՝ Իրանը պարունակում է 20-ական թվականների սկզբների հայ իրականության տարբեր ոլորտների վերաբերող հետաքրքիր փաստեր:

Նամակների բնագրերը պահվում են Ծ. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (Ա. Չոպանյանի ֆոնդ, № 4187—4189):

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՉԱՔԱՐՅԱՆ

1

2 օգոստոսի <1923 թ.,

Կ. Պոլիս>

Սիրելի պ. Չոպանյան,

Ստացա Ձեր հուլիսի 24 և 27-ի նամակները: Եղեք անհոգ, Ձեր պատվերները կկատարեմ առաջին հերթին:

Ստացել եմ բավական գրականություն, ի միջի այլոց, «Նորք»-ի № 2-ը: Գրում եմ, որ շարվում է երրորդը: Ստացել եմ Եղիշե Զարենցի Մոսկվայում լույս ընծայած (22 թ.) «Երկերի ժողովածուն»: Երկու հատոր է: Ուզում եմ մի փոքրիկ ժողովածու հրատարակել այստեղ—Զարենցի ընտիր երկերից: Օգտագործելուց հետո երկհատոր Մոսկվայի հրատարակությունը կուղարկեմ Ձեզ: Կուղարկեմ Ձեզ նաև այստեղ ստացածս պետհրատի հրատարակությանց ցուցակը:

Շատ շնորհակալ եմ թարգմանությանս՝ համար Ձեր արած բարձր գովասանքի համար:

Այս օրերս լույս կտեսնեն Տերյանի 2 և 3 հատորները, որ անմիջապես կուղարկեմ Ձեզ:

Ձեր Պոլ. Մակինց

2

4 հոկտեմբերի <1923 թ.,

Կ. Պոլիս>

Սիրելի պ. Չոպանյան,

Ստացա Ձեր վերջին երկու նամակը իրար հետևից: Անհամբեր սպասում եմ «Զրասույզ զանգի» մասին գրած Ձեր գրախոսականին¹ և շնորհակալ եմ, որ իմ հոգվածին տեղ պիտի տաք «Ապագայի»² էջերում: Բնականաբար, Ձեր խմբագրապետի փորձառու ձեռքով կատարած հապավումին տալիս եմ կատարյալ հավանությունս:

Գալով պ. Ավիկ Մուպահաճյանին, պետք է ասեմ, որ այդ մարդու աղ-
ղեցության շնորհիվ «Ժողովրդի ձայնը»³ դառել է միանգամայն դիմադուրկ-
Օրինակ: Գալիս է դաշնակցական դեկլարացիան⁴, փաստաթուղթ է, չէ՞: Եվ
օգուտ ուսման վարձերի, ընդլեմ դաշնակցների: Ինքս թարգմանում եմ հայե-
րեն և առաջարկում «Ժող<ովրդի>» ձայնին» տպագրել: Մերժում են: Վա-
խենում են: Ուղարկում եմ նույն տեքստը (1 անընթ.) «Ճակատամարտին»⁵,
Մարդիկ թարգմանել են տալիս հայերեն և անմիջապես տպագրում:

Ապա՝ նույն «Ժող<ովրդի>» ձայնին խմբագրության առաջարկով հոդ-
ված եմ գրում այդ հայտարարության առիթով: Կարդում են և «վախենում»
տպագրել: Մինչդեռ «Առավոտը»՝ առանց մի բառ կրճատելու—լույս է ընծա-
յում քանի օր անց՝:

Ահա նման նմուշներ, կարող էի շարել իրար հետևից, որոնք ապացու-
ցանում են, թե «Ժող<ովրդի>» ձայնը—թուլամորթ է, վարանոտ, վեհե-
րոտ, դիմադուրկ—շնորհիվ Ավ. Մուպահաճյանի:

Մինչդեռ ես բավականին զգալի շափերով նյութապես օժանդակել եմ
«Ժող<ովրդի>» ձայնը», թե անմիջական նպաստով, թե հայտարարություն-
ներ տպագրելով: Այդ մարդիկ գնում իսկույն ամեն ինչ հայտնում են «Ճակա-
տամարտին», որը այդ ամենը օգտագործում է արտասահմանյան մամուլում.
Թե նրանց, թե իմ դեմ: Կարելի՞ է հարգել և աշխատակցել այդ մարդկանց
հետ:

Պիտի ասիմ, որ անձամբ այդ ապիկար Ավիկին ծանոթ չեմ, չեմ տեսել
անգամ, չգիտեմ թույլ է, թե շեկ: Սակայն թե պ. Թերզիպաշյան⁶, աստ եղած
ատեն, թե պ. Ալթունյան, բոլոր կամենում են նրա ձեռքից և նրա աղղեցու-
թյունից ազատել «Ժող<ովրդի>» ձայնը: Սակայն Թերզիպաշյան հար-
կադրվեց թողուլ Պոլիսը, Ալթունյանը բաշվեց ասպարեղից և պատրաստ-
վում է Հայաստան փոխադրվել ընտանիքով և հրապարակը մնում է Ավիկի
ձեռքը:

Այսքանը այդ մասին:

Ուղարկեցի Ձեզ Տերյանի II և III հատորները¹⁰, Շուտով կուղարկեմ Չա-
րենցի գիրքը¹¹ և Տերյանի I հատորը:

Ուղարկում եմ նաև մի նկար, որ տպագրվել է Հայաստանում գտնված
կակուղ վիմագիր քարի վրա: Սա հետաքրքրական է, վասն զի նախ այդ—ամ-
բողջ միութենական լիտոգրաֆիական քարը Գերմանիայից էր բերել տալիս:
Նկարը—Կոջոյանին¹² է:

Իթե բարի լինեք Ձեր հոգվածը թարգմանությանց մասին կարգադրել
ուղարկել ինձ, ինչպես և իմ հոգվածը տպագրված—շնորհակալ կլինեմ:

Սեղմում եմ Ձեր ձեռքը՝

Ձեր Պոլ. Մակինց

Սիրելի պ. Չուպանյան,

Դարձյալ ու կրկին կարդացի Ձեր վերջին նամակը: Մրցանակի խնդիրը՝
դուր այնքան մտածված ու մանրամասն շարադրած էք, որ ես բնավ ասելիք

շունեմ, Կցանկայի միայն, որ հարգելի պ. Կամսարական² աճապար է այդ գեղեցիկ օրինակը—հրահրելու մեր ազգի գրականության զարգացումը—շուտափույթ ի կատար ածելու:

Ձեր ծրագրի առիթով գրում եմ Մուսվյանին³, Կանխավ կարող եմ մեր ընկերների կողմից թե՛ հավանություն, թե՛ շնորհակալություն հայտնել Ձեզ և Ձեր միջոցով պ. Կամսարականին:

Վաղը մեկնում եմ Անգորա (2 անրն.) ինդիերների համար, ի թիվս որոնց մեր 10 հազար գաղթականների Անդրկովկաս ուղևորելու հարցի մասին:

Կմնամ ոչ ավել, քան մի շաբաթ, Ապա՝ պիտի վերադառնամ Պոլիս և այստեղից ուղղակի Խիֆիդ⁴, Յավում եմ, որ շաջողվեց անձամբ ծանոթանալու Ձեզ և Փարիզը տեսնելու պատեհություն ունենալու, Սակայն լիաճույս եմ, որ մեր միջև հաստատված կապը—այլևս չպիտի խզվի:

Տպագրվեց Վ. Տերյանի 1 հատորը⁵—որ կազմատեղից դուրս գա թե չէ—անմիջապես կուղարկվի Ձեզ համար:

Կենսագրականի մեջ աշխատել եմ կարյալս չափ լինել զուսպ և վարա-գուրել ռեսս-ս:

Թող ապագայում, երբ ես լույս կրնժայեմ պոետի նամակագրությունը (շատ հետաքրքրական) և նրա կյանքին վերաբերող փաստաթղթեր—թող այն պահին գրվի նրա իսկական կենսագրականը և սա նկատվի որպես մի ակա-նատեսի վկայություն:

Թերևս մինչև գնալս կարողանամ Ձեզանից ստանալ մի վերջին երկտող ևս, այդ հուսով՝ ցգրություն

Ձեր Պող. Մակինց

Հետո գրած՝

Ձեր անցած նամակներից մեկում գրած էիք, որ 30 հազար ֆր. դեղորայք ուղարկելու մտադրություն կա՝ Ուստի պ. Շահվերդյանը⁶ ուղարկեց Հայաստանին պիտանի դեղորայքի ցանկը կարմիր խաչի ներկայացուցչին:

Պօղ.

ՍԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1

1 Խոսքը, հավանաբար, Գերհարտ Հաուպտմանի «Ջրասույզ զանգը» չափածո դրամայի՝ Պ. Մակինցյանի թարգմանության մասին է:

2

1 և՛. Չոպանյանը «Թարգմանական գրականությունը մեր մեջ» հոդվածաշարում (տպագրվել է Ալեքսանդրիայի «Արև» թերթում. 1923 թ. հոկտեմբերի 31, № 271, նոյեմբերի 1, № 272, նոյեմբերի 3, № 274) անդրադարձել է Պ. Մակինցյանի «Ջրասույզ զանգի» թարգմանությանը (նոյեմբերի 3, № 274) և բարձր գնահատականի արժանացրել այն:

2 «Ապագա»—քաղաքական և հասարակական շարաթաթերթ (ապա՝ եօրյա), Հրատարակվել է Փարիզում՝ 1921—1936 և 1945—1950 թվականներին:

3 «Ժողովրդի ձայնը»—ժամանակ—օրաթիրթ. լույս է տեսել Կ. Պոլսում՝ 1920—1924 թվականներին:

4 հոսքը դաշնակցության կովկասյան խմբերի և Վրաստանի Կենտրոնական կոմիտեի (ռաշխատավորականներ) նախկին անդամների 1923 թ. Նոյեմբերի հրապարակած ղեկավարացիայի մասին և (Վայտարարության տեքստը տե՛ս «Заря Востока», 1923, 31 июня, № 174, նաև՝ «Խորհրդային Հայաստան», 1923, Նոյեմբեր 31. № 165):

5 «Ժակատամարտ» — օրաթերթ. լույս է տեսել 4. Պոլսում՝ 1918—1924 թվականներին:

6 Տե՛ս «Ժակատամարտ», 1923, հոկտեմբերի 13, № 1498:

7 «Առավոտ» — քաղաքական և գրական շաբաթաթերթ (1924-ի հոկտեմբերի 22-ից՝ օրաթերթ): Հրատարակվել է Կ. Պոլսում՝ 1909—1924 թվականներին (առաջին աշխարհամարտի տարիներին լույս չի տեսել):

8 հոսքը «Կովկասի դաշնակցականների մեղայականը» վերնագրով հոդվածի մասին է, տե՛ս «Առավոտ», 1923, հոկտեմբերի 15, № 108:

9 հոսքը հայ ճառարական գործիչ, գրող Ավետիս Հարությունի Թերզիբաշյանի (1873—1947) մասին է:

10 Վահան Տերյանի «Երկերի ժողովածուի» II և III հատորները հրատարակվել են Կ. Պոլսում՝ 1923 թ., Պ. Մակինցյանի խմբագրությամբ և ծանոթագրություններով: II հատորում տեղ են գտել «Գիշեր» և «Նշեր», «Ոսկի ձեռքաթ», «Վերադարձ» շարքերը, իսկ III-ում՝ «Ոսկե չղջիկ», «Կատվի դրախտը», «Երկրի նախնին», «Վերջին դաշնակց» և թարգմանություններ:

11 հոսքը նդիշն Չարենցի «Պոեմների» մասին է, որ հրատարակել է Պ. Մակինցյանը Կ. Պոլսում՝ 1923 թ.: Այն ունի «Նդիշն Չարենցի և նրա պոեմները» առաջաբանը, գրքում գեղարված են «Սոմա», «Ամբոխները խելագարված», «Բոլորին, բոլորին, բոլորին» շարքից՝ «Նախիի երկրից», «Ինչպի ապագան», «Բրունգե թևերը կարծիք գալիքի», «Ինչ և ամենապոեմ», «Հարենց-նամ», «Կապկապ» գործերը:

12 Պ. Մակինցյանը Հսկոր Կոչոյանի վիճառից ղեկավարված մի նկար, որ ներկայացնում է «պարբերական լուսավորության և դրամատիկության միջև» (սկզբ, 1923, հոկտեմբերի 31, № 271), ուղարկել է Ալեքսանդրիայի «Արև» թերթին: Հավանաբար, Ա. Զոպանյանին ուղարկածը սրա կրկնօրինակներից է: Հիշյալ նկարը, կարծում ենք, «Պրոլետարիատի պայքարը» աշխատանքի տարրերակներից է, որ Հ. Կոչոյանը կատարել է 1923 թ. արժաթի վրա: Այն 1923 թ. Մոսկվայի տնայնագործական-արդյունաբերական ցուցահանդեսում արժանացել է առաջին մրցանակի, իսկ 1925 թ. ուղարկվել է Փարիզ՝ ղեկավարված արդյունաբերական ցուցահանդես:

3

1 հոսքը հայ ճառարական գործիչ, գրող Տիգրան Խաչատուրի Կամսարականի (1866—1941) սահմանած գրական մրցանակի մասին է: Տ. Կամսարականի անվան գրական մրցանակաբաշխությունը կարող էին մասնակցել թե՛ Հայաստանում, և թե՛ նրանից դուրս ապրող հայ առաջադեմ բոլոր գրողները (տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1925, փետրվարի 1, № 25):

2 հոսքը Տիգրան Կամսարականի մասին է:

3 Նկատի ունի Ասրանաղ Մուսվաթին:

4 Մարտի սկզբներին Պ. Մակինցյանն արդեն Թիֆլիսում էր:

5 Վահան Տերյանի «Երկերի ժողովածուի» I հատորը հրատարակվել է Կ. Պոլսում՝ 1924 թ., Պ. Մակինցյանի խմբագրությամբ և ծանոթագրություններով: Հատորում գտնված են «Խմբագրողի կողմից» ներածականը, պոետի կենսագրականը և «Մթնշաղի անուրջներ» շարքը:

6 հոսքը պրոֆեսիոնալ ղեկավարական, կոսակցական, պետական գործիչ Դանիել (Կաշուշ) Շահվերդյանի (1882—1941) մասին է: Այդ մամանակ նա Հայաստանի Ժողովածուների նախագահ: Ներդրակալն էր և արդարադատության ժողովում: